

ՄԱՅՈՒՆԱԿԱՆ

ԳԱՐՈՒԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆՐԱՊԵՏ

Ա. ՏԱՐԻ

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 3

Խմբագրող

Մ. ԻՓԵՔՅԱՆ

Արժույթ

Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի՛ Աղերսե՛ր, Այլ Պահանջե՛ր

Զինուորական և Հիմնական

Գաղտնի Դերը Ազգ. Վեր. Դործին մեջ.

Իրիկուն և աշուն (բանաս.)

Վաղատունները գաղտնի մեջ

Յերապոլիտոսիան և Յերապոլիտոսիաները

Գաղտնի կենսիկ և աշուն:

ԽՍԲ. Գ. ԱՐԵՇԵԱՆ

ՓԲՅ. Գ. Գ. ԿԻՎԵՆ

ԳԱԴԻԿ ԾՁԱՆԵԱՆ

ԱՐԱՄ ԶԱՅԱՆ

Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Թ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՇՆՊԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեր խորին շնորհակալությունները ընդ

Խմբագրականներուն, որով «Ամսաթիվ»

ներս շնորհակալական իրենց քերական և լեզվական

Նոյնպես մեր արագին շնորհակալությունները բոլորովին և անհրաժեշտ
նոր լեզվականներուն և համակարգներուն, որով իրենց գլխավորական և լեզվա-
դասական անկեղծ և ֆալսեթիչ շնորհակալական խորհուրդներն և խորհուրդներն

Իմ քերական և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

Խմբագրականներուն և լեզվական

ԱՄԱՌԱ

Տպագր. ԹԱՊԻՊԵԱՆ և ԵԱՐՏԱՐԱՆ

ԱՄԱՍԻԱԻ ՀԱՄԱԼՆ

آماسیه ده «آماسیه» غزته سی مدیریتی

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսամյակային համադրություն - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամիս 1ին և 15ին, թարգմանիչ և հայերէն լա-
թիններով: Թարգմանիչ բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12էջ.
երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տա-
րեկան 24 թիւ միջոցի պիտի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան	1 մեկնիս	Արսասանական տարեկան	3 փր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեգինը բացարձակապէս կանխիկ է: Մակագումներու համար ա-
ռանձին նպաստաւոր սրահներ կը տրուին:

Տարբ. օրինակ «Ամասիա» սպասուղին՝ մէկ օրինակ նուէր:

ԲՈՒՐԹ ԹԵՐԹ ՍՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ

Այս վերջին թիւն է որ իւր նմայշ կը դրուի մեր բոլոր ծանօթներուն ու
բարեկամներուն: Անոնք որ մինչև չորրորդ թիւ կամ իրենց զրկուած երեք թիւերը
չեն վերադարձներ և կամ քարթով մը իրենց արամադրութիւնը չեն յայտնել, օրը-
նական բաժանորդ նկատուելով՝ պիտի չարժանակենք թերթերու տաքումը: Ի վերջոյ
ամէն օրորագրի տակ բաժնեգինները պահանջելու մտադրութեամբ: Ահա, կը փա-
վաքինք որ մինչև Դ. թիւին ըստ ահմանը իրենց կամքը յայտնեն: Նոյնպէս կը փա-
վաքինք որ իրենց արամադրութիւնները փութով յայտնեն բոլոր անոնք, որոնց դը-
մած էինք որ թերթիս գործակալութիւնը ստանձնեն:

ՆԱԽԲԱՏԱՅԻՆՈՒՆՆԵՐ

Մէյլեկ տարեկան «Ամասիա» կը նուիրենք՝

Մարգարէն Տեառ Մամիկոն Վարձապետան՝ Գանացայի Պեղին Բաղաբ՝ Կա-
րապէտ ԷՅ. Տեառ Յակոբեանի:

Տեառ Միմաս Իփեհեանի և Է. ԷՅ. Մանիսանեանի և Մարգարէն Օր. Շնոր-
հիկ Գլըբեհեանի:

Գոլդայի գործարանատէր Տեառ Դ. Ժամկոյեան՝ Դանիւր Գարուբիւն ԷՅ. Բե-
լեհեանի և Յ. ԷՅ. Փեփեհեանի, Նուս Երզնկա՝ Տեառ Մոմեհեան Եղբարց:

Տեառ Տիգրան Սոյե սպարապետ Իսկանդար Եղբոր Գարուբիւն ԷՅ. Նիսիի:

Տեառ Աղեհեանց՝ Գասպարեան՝ Ամասիայից, Տ. Աւագեանի:

» » Խանարեան՝ Թալաս Պողոս ԷՅ. Վարձապետանի:

» Մանիսան Թանեան Վարձապետ ԷՅ. Լուսիկեանի:

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՆՈՅԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 3

Խմբագրական

ՄԻ ԱՂԵՐՍԵՐ, ԱՅԼ ՊԱՀԱՆՋԷ

Ընդունում Իրականութիւն մըն է, որ բողոքը կը բարձրանայ՝ խորած իրաւունքի մը, գործում անարդարութեան մը և ի՞ գործ գրում բարբա-
րութեան մը դէմ: Բողոքը թերեւ բնաւ գոյութիւն չպիտի առնէր, եթէ
երբէք քաղաքակրթութեան զարթումին հետ, դատակարգային շերտառ-
ւումները, տիրոջի և տիրապետողի, ճշդի և ճշտողի, իրաւագործի և
յափշտակիչի նման երեւոյթներ ու իրականութիւններ չի կազմէին ներկայ և
անցեալ կեանքի պայմանները: Սակայն իրականութիւնը այն է, որ այս պայ-
մաններու մէջ կ'ապրի ներկայ մարդկութիւնը և պէտք ունի իրեն դէմ ե-
լած անիրաւութեան, անարդարութեան, և վերջապէս ամէն կերպ զրկան-
քի դէմ բողոքելով՝ պահանջին գոհացում ստանալու: Սակայն հարցում մը
կը ներկայանայ մեր մտքին առջև թէ՛ ամէն բողոքող իրաւունքին կը տի-
րանայ: Իրաւ է թէ ներկայ տիրող սկզբունքներն ու զեկավար տարրերը
տիրաներու ու անգործներու կողմէ եկած բողոքներու հանդէպ արհամարհա-
նայումք մը նետելով՝ զայն իր ծիլին մէջ խեղդել կը փորձեն, ի՞ շահ իրենց,
սակայն միեւնոյն ատեն ճշմարտութիւն մըն է որ՝ իրաւունքի վրայ ձեռնած, ար-
դարեւ ինչ ներկայացնող ու զօրաւոր կամքով և օրինական հիմերու վրայ
գործած բողոքներուն ու պահանջներուն յաճախակի տեղի կուտան անոնք:

Փառաւայիններս սակայն, մասնաւորաբար հայերս, կարծես միջավայրի

ազգեցութեան և երկար սարիներու տիրող յոռի պայմաններու թմրութեան տակ՝ բողոքող ու պահանջող ժողովուրդ մը լայն աւելի անտարբեր, գլխաւահայ՝ ու համակ աղերսարկու ժողովուրդ մ'եղած ենք:

Ընդունելով հանդերձ որ մեր երկրին շովէն ղեկավարները ազգայնամոլակա և ձուլման յոռի քաղաքականութիւններէ մշուած, մեր արդար բողոքներուն ու իրաւացի պահանջներուն հանդէպ անտարբեր կը գտնուին, սակայն մեզ ալ պէտք է ընդունինք որ անոնց ճեղի ճաղուն համար պէտք եղած բողոքի ու կորովն ու գործունէութիւնն և պահանջուած օրէնսդիտութիւնն ու վարչադիտութիւնն ունենալէ հեռի ենք:

Շատ անգամ, անհատապէս թէ Ազգովին կը տեսնենք ու կը դաշալենք թէ մօտաւորապէս զրկանքներու պիտի ենթարկուինք անտեսապէս, քաղաքականապէս ու կրթապէս. փոխանակ բոլոր օրինական ու պահանջուած կանխարգել միջոցներուն դիմելու անմիջապէս, սառն անտարբերութեամբ մը կ'սպասենք որ ան գայ իր ճշումներն ի' գործ դնելու. երբ ալիս օրինական ունէ միջոց չէ մնացած պաշտպանուելու, բողոքելու և իրաւունքի աւերանալու համար, այն ատեն կ'սկսինք ձախող քայլեր առնել, աղերսարկու նախաձեռնութիւններ նետել, քրտնջրներ համբուրել և ազգային ու անհատական սովորութիւններու խախտումներ իրաւ իրաւ զրգարելու:

Այսպէս չէ՞ եղած և չ'ըլլար զինուորագրութեան գործին մէջ. երբ կառավարութիւնը մեղի միջոց տուաւ որ տարիքի սրբագրութիւնն սրտեայ պայմանաժամի մը մէջ ընենք ու վերջացնենք, մենք մեռելային անտարբերութիւն մը ցոյց տուինք գէպի այդ կենսական հարցը. սակայն հիմա երբ մեզի դիմորական հրաւիրատունը կը ներկայանայ, հիասթափած՝ մեր տարիքներու սրբագրութիւնը միտքերնիս կ'իյնայ, կը դիմենք, կը բողոքենք սակայն ի' զուր. կ'սկսինք աղաչել, այս կամ ան էֆէնտինն տու՛ն յախրաս բարեւ բռնել ու շնորհ մը հայցել, բայց դարձեալ ի' զուր. Բայց ինչո՞ւ ժամանակին չի պահանջեցիր և հիմա կ'աղերսես:

Մենք այնքան անտարբեր կը գտնուինք որ նոյն իսկ չենք փորձեր մեր կեանքին հետ կապ ունեցող զինուորագրութեան օրէնքները ուսումնասիրել, ալ այս կամ այն աղաչին ու էֆէնտինն տուած կէս կիտառ տեղեկութիւններէն բառականաբար կը փորձենք մեր գեռատի զաւակներն ու եղբայրները ամուսնացնել՝ զինուորութենէ աղաատելու մտադրութեամբ. սակայն երբ կը տեսնենք թէ սխալեր ենք ու զանաւր իրենց երազներու գրկէն իւրելով դէնքի տակ կը կոչեն, խելակորոյս կը բողոքենք, կ'աղերսենք, այս ու այն դուռը ափ կ'առնենք, կուլանք ու կը պաղատինք, բայց ի' զուր, օրէնքը անողոք է և բողոքը անլսելի. Բայց ինչո՞ւ անտարբեր գտնուեցար ճիշտ ժամանակին և հիմա կ'աղերսես ու կ'ողբաս:

Այս է մեր ընթացքը անտեսական թէ կրթական, քաղաքական թէ

բարոյական, մեր բոլոր յարաբերական գործերուն մէջ: Չենք գիտեր՝ օրէնք, բարքերու կերպ և ժամանակէն ու առիթէն օգտուիլ, մեր երեսփոխանական ժողովներէն, առաջնորդներէն և չեկավարներէն սկսեալ՝ մինչև պարզ արհեստաւորներա: Կը թողունք որ լախտը մեր գլխուն խշնէ և մենք անկէ վերջ ճիգեր չենք այդ հարուածին տակէն փրկուելու:

Այլևս պէտք է զարթնուիլ ժամանակին հետ քաշել և գաւառին ու Ազդին իրական պահանջներուն տեղեկանայ, որպէսզի ասկէ վերջն ալ գիտնանք բողոքել ու պահանջել, փոխանակ աղերսելու. այս պէտք է ըլլայ ամէնուս նշանաբանը. այս կը պահանջեն ներկայ պայմանները:

Գ. ԱՔԷՇԵԱՆ

Գաւառի Ցաւերէն

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԸ ԵՒ ՀԻՄԷՆ^[*]

Ի՞նչ երկար թափօր է ան. ո՞ւրկէ կու գան այդ կառքերը, այդ ձիաւորները. տե՛ս, ումանք ալ զուարթացած են... գիւնով. նրազէններ կը պարպուին. նայէ՛, այ՛ կառքը միւսներէն աւելի զարդարուած՝ առանձնայատուկ բաներ մը ունի. ի՞նչ է այն թափօրը...:

— Չէ՞ս գիտեր, բարեկամ, հարսնեւորներ են, Ամասիայէն կու գան:

Ա՛յ ամէն օր նոյն հարցումները. իսկ պատասխանը. «Հարսնեւորներ են, Ամասիայէն կու գան, Ամասիա կ'երթան, Չօբուսէն կու գան, Չօբուս կ'երթան, Հաճի Գիւղէն կու գան, Հաճի Գիւղ կ'երթան, ..., հարսնեւորներ են»:

Այլևս ինչո՞ւներու հոյլ մը կուգալ կը գտուէ միաքի — ինչո՞ւ այս տարօրինակ փոփոխութիւնը մասնաւորապէս այնպիսի շաղքի ներս միջև, որոնք իրարմէ ուժայած էին, և որոնց յանկերգն էր. «Էրկիր իր աղեկը դուրս կուսա՞լ»։ ու հիմա՞յ այս ինչ տարապա ման յաճախութիւն խառնութեամբ: Ինչո՞ւ, ինչո՞ւ — Հեռու քաղաքէ անո՞ք ազջիկներու հետ կ'ուժանանան որ կարենան ետաւադից գլին-

ւորակա՞ն ծառայութիւնէ: Եւ վա՛յ մեղքիս, ասոնք այն մարդիկը չեն որ նաւրագրութիւններով, հեռագիրներով, շրթնդալից միքսիկներով տազւոյն ազմուկ հանեցին՝ գոռալով ու դռչելով. «Քանի որ հաւասարութիւն կայ՝ մենք զինուորական տուրք չենք տար, անձամբ պիտի ծառայենք, եւ այլն»:

Պիտի առարկուի թէ այն ասին լաւատես էր, չէին գիտեր զինուորական կեանքի անպատեհութիւնները, անոր ծառայութեան դժուար կողմերը, զօրանոցներուն անբարեկարգ վիճակը, երբեմն սպաներու խորող վարուելակերպը, ևլն.:

Ասոնք միամիտներու կամ յաւէտ կարճատեսներու յատուկ առարկութիւններ են: Քանզի ո՞ր ընչերնչա անպատեհութիւն չունի, և եթէ քիչ չատ բարեկարգութիւն կայ, ան ալ նորէն զինուորական կարգ ու սարքին մէջ փնտուելու է: Միւս կողմէ՝ շատո՞նց անցիր է հրաշքներու դարը. մէկ օրէ միւսը Խոսպիան թեւափոխելու յունակ՝ մէկ ստուգմով Ամասիայէն Ամերիկայ հասնիլ կարենալու աւելնելութեան պէս լան մը պատի ըլլար: Ասով հանգերձ ոչ ոք կ'ուրանայ վերի ա-

[*] Հարսանիքի ասուածք:

ռարկութեանց և նոյն իսկ աւելիին իրա-
կանութիւնը: Բայց ո՞վ պիտի հարթէ
այդ առապարները:— «Թող ուրիշը ընէ».
ահա՛ հանգստակը եսամոլներուն: Քանզի
ամեն Հայ ջատագովելով հանդերձ վերջա-
տին զինուորական ազգ դառնալու, աս-
պետական ոգին վերակենդանացնելու
կենսական կարեւորութիւնը՝ կ'ուզէ որ
ինք զերծ ըլլայ այդպիսի աւագ պար-
տականութենէ մը: Ուստի յերիւրուա-
ծոյ են այն առանդակն բարեմասնու-
թիւնները, որոնցմով կը յոխորտանք յա-
ճախ իբրեւ թէ Արեւելի քաղաքակրթու-
թեան ռահմիւրաներն ենք... եղած, ու
պիտի... ըլլանք: Այս կերպով, հա՛,
Ո՞վ կ'ընէ թէ քաղաքակրթութիւնը փետ-
րանկողիներու սիրող մեղկ պարիկ մըն
է: Ուրիշ ամէն պարագաներու տակ յա-
նուն հաւասարութեան կը բողոքենք,
յանուն անոր տրտունջ կը բարձրացնենք
— իրաւունք ալ ունինք. հապա ինչո՞ւ
հոս կ'ուզենք մեղանչել այդ նոյն հաւա-
սարութեան դէմ: Հաւասարութիւն ու-
զուր նախ՝ ինք յարգելու է հաւասարու-
թիւնը, մանաւանդ մենք՝ Հայերս հաւա-
սարութիւն գործելով և հաւասարութեան
վրայ պնդելով ու պնդելով է որ տակա-
տակաւ հաւասարութեան գաղափարին
պիտի վարժեցնենք մեր թուրք հայրենա-
կիցները, որ դարերով միայն թուրք տի-
րապետութեան սովոր՝ խորթ կը հնչէ այդ
բառը: Ասոր վկայ. Սահմանադրութեան
հրատարակումէն վերջ մինչև անգամ ա-
մենէն աւելի սահմանադրատէր համար-
ուածներու կողմէն չէր որ տուն տրուե-
ցաւ «Տիրոջ ազգի ու Տիրուոյ ազգայնու-
թեան» անտեղի գաղափարին. և (խօսքը
մեր մէջ) Օսմանեան Խորհրդարանը արդէն
չատ յոժարակամ չէր որ ընդունէր ոչ-խա-
լամներու զինուորագրութեան խնդիրը.
խնդիր մը զոր Խորհրդարանի մէջ վիճա-
բանութեան[*] ենթարկուելն իսկ խտրող կը

համեմատէր Սահմանադրութեան ոգւոյն,
կամ ուրիշ խօսքով՝ գոյութեան իրաւունք
չունէր այլապէս, եթէ մեր «տիրոջ» հայ-
րենակիցները կարենային իրենց խորհեա-
կերպին հետ հաշտեցնել հաւասարութեան
գաղափարը: Սակայն տարբեր չէր կըր-
նար ըլլալ. կամ հաւասարութիւնը յար-
գըւելու էր և կա՛մ Սահմանադրութիւնը
ջնջելու:

Այսպէս թէ այնպէս՝ ալլեւս փակուած
էր խնդիրը. ոչ-խալամն ալ իրաւունք պի-
տի ունենար զէն ի ձեռին ծառայելու հա-
սարակաց հայրենիքին:

Ահա՛ հոս յանկարծ կը փոխուի ոչ-խա-
լամներու «դրամ չենք տալ, անձանք կը ծա-
ռայենք»ի յանկերգը. ա՛լ փնտռուածը
զինուորական ծառայութենէ խոյս տալու
մըջոցն է. միջոց, միջոց... Դրամա-
կան փոխարինութիւնը շատերու կար-
ողութենէն վեր է. հարուստը արդէն սի-
րայօժար դրամ վճարելու վարժուած չէ:
Հապա ի՞նչ ընել. միջոց, միջոց, ի՛նչ
միջոց: Եւ ահա՛ իսկոյն ամեն կողմէ
կ'արձագանգէ. «Էվրէքա — գտա՛յ» — ա-
նոխ, անօգնական աղքիւսն հե՛տ աւելանալուն:
Իրաւ ալ ի՛նչ պատուական գիւտ, թէ՛ որ
առաջ ամուսնանալ և թէ՛ զինուորական
ծառայութենէ պրծիլ:

Սակայն դժբաղդաբար երեւակայու-
թեան ստեղծած վարդագեղ անուրջները
միշտ չեն համապատասխաներ յուրտ ի-
րականութեան: Արդ համառօտակի քըն-
նենք թէ զինուորական ծառայութենէ
նուա՞զ վնասակար է տարաժամ ամուս-
նութիւնը:

Տարակոյս չկայ թէ սոյն նորօրինակ
խնամութիւնները իրենց երկրորդական
օգուտները ունին. օրինակի համար դա-
նազան քաղաքներու ազգայինները խը-
նամիական կապերով մրացած՝ առիթը
կ'ունենան սերտ յարաբերութիւն մշակե-
լու՝ հետեւաբար աւելի լաւ հասկնալու
զիրար և այդ կերպով օգտուելու իրարու

[*]Յօդուածագիրը անձանք ներկայ էր:

բարեմասնութիւններէն: Ասկէ զատ՝ այս խնամութիւնները կրնան նպաստել դասակարգային խտրութեանց աստիճանական ջնջումին. քանի որ երիտասարդը կա՛մովին կ'ընտրէ — ստիպուած է ընտրել — զնէ որ անո՛ք է, անօգնական է՝ փոյթ չէ թէ որքա՛յ ըլլայ, աղքատ կամ քչիկ մըն ալ ... պակասուոր:

Բայց ասոնք և ասոնց նման երկրորդական օգտակարութիւններ կը նսեմանան այն վնասներուն քով որ ծնունդ կ'առնեն միայն «անօգնական»ի տեսակէտէ կնքուած ամուսնութիւններէ: Անաւատիկ այդ վնասներէն մէկ երկուքը:—

1. Տխեղծ սեռումը: Երիտասարդ մը զինուորութենէ խուսափել կարենալու համար քսանը թեւակոխելէ առաջ ամուսնացած ըլլալու է, ինչ որ կը նշանակէ հսկայ ամուսնութիւն, որուն արգասիքը կ'ըլլայ տխեղծ սեռումը[*] մը, վատասերում ազգէն. ու սակայն տես որ աղքատիւութիւնը իրենց անձին մէջ մարմնացածի հոգի տանողներն են յաւէտ որ աղքային վատասերումին ռա՛վիրաներ կը հանդիսանան ո՛ր ժառանգալի, ո՛ր քարի (O tempora! o mores!):

2. Հապճեպ ընտրութիւն: Կենակից ընտրելու ներկայ կերպն ո՛չ նահապետական է և ո՛չ այժմէական. աղաճրակա՛յ ալ չէ. այլ օրը օրին հապճեպի արդիւնք: Բազմութիւնները յարգելի են միշտ: Հոն կ'անտեսուին առողջապահական պայմանները, կրթութիւն, ցեղի ազնուութիւն, կազմի ու տարիքի համեմատական պատշաճութիւն. իսկ ճաշակի ինքիւրը ընտելացութիւն չունի. «խօր եւ քօխոյ եւ» մահապաղ եւ»ի սկզբունքն է որ կը տիրէ:

Արդ անգամ մըն ալ կը շեշտենք հոս թէ կա՛ն աւելի ազգակործան ազդակներ

քան անյարմար ամուսնութեամբ կազմուած ընտանիքներ: Ուստի եթէ խոհեմ ընտրութեամբ կնքուած յարմար ամուսնութիւնը երկինք-շնամանիք մը կ'արտադրէ, չէ՞ որ հակադարձը պիտի ըլլայ դժոխք-ընտանիք, և եթէ ազգ մը ընտանիքներէ կը բաղկանայ, հետեւեալոր չէ՞ որ դժոխք-ընտանիքներէ դժոխային ազգ մը յառաջ պիտի գայ: Անհամաձայնութիւն, կազ ու կռիւ, ծեծ ու փետ, սնահաւատարմութիւն... և վերջապէս քանդուած օնանիւն:

Կէտ մըն ալ: Դասն տարեկան երիտասարդներէ շատեր գուրկ են բարեկեցիկ ծնողքներէ, գուրկ նաեւ արեւստէ. որով իրենց հարսերը քիչ ատենէն պիտի գրանեն կա՛մ հարուստի լուացքի տաշտին առջև և կամ հորը իջած... գործելու և նշնար օրապահիկ մը հայթայթելու, իրենց ա՛նկուտի էրիկներուն սիկարին ու սուրճին դրամը ճարելու, և այսպէս շինչող կեանքէ ու արեւէ զերկ՝ վտտելու և հալումաչ իջնելու մութ հորը... մահուան:

Փակագծի մէջ հարկ է աւելցնել թէ կա՛ն նաեւ պարզամիտներ որ առանց լաւ մը քննելու, ուսումնասիրելու զինուորական օրէնքը՝ կ'ամուսնանան, և ահա՛ դարձեալ զինուոր են. եւ ինչ յուսախաշութիւն նորամուտ ամողքին. հիմէնեան զուարթ երգերը կը փոխուին կարօտաբաղձ մեղամաղձիկ մանկներու:

Մեր յողուածին վերջակէտը դնելէ առաջ՝ նիւթին բնոյթը կը թելադրէ հոս ուրիշ աղէտք մըն ալ:

Արտասահման փախիկ, կամ տարբեր բացատրութեամբ՝ ամուսնանալ պանդխտութիւն կոչուած ճիւղին հետ: Սա արեւմտեան աշխարհը ինչ կենսական հրապոյր ունի մահաւանդ անոնց համար որ մօտէն չեն ճանչնար զայն: Անոր փառաւորութեանց մասին միայն կը խօսին ահոր առասպելական ճոխութիւններէն կ'առնինք ու չէք հայ երիտասարդ,

[*] Այս մասին քնդարձակ գրելու պարտականութիւնը կը ծանախայ «Ամաքիս»ի բժիշկ ախտաւիճիկներուն: Ծ. Յ.

անոնք ինչ օգուտ ունին քեզ. քու տեղեղ գործարանն է, բանուորի բաճկմանը՝ քու համազգեստդ, Արևելքի թուլի աշխատութեանց, զիւրակեցիկ ապրելակերպին վարժ դաւկին համար քանի՞ դժեւ դակ է այդ կեանքը. եթէ այդչափ հեշտ ըլլար ան, ինչո՞ւ ծագում առնէր բանուորական հրատապ հարցը և ինչո՞ւ այնքան բուռն պայքարներ մղուէին անոր շուրջ։ Դժոխքներ է այն մասնաւորապէս Հայուն համար, որ ցաւալի է լսել թէ դժուար գործի մասն գաղափար անգամ չունի։ Քանի՞ ծաղկափ հայորդիներ խամրած են այդ մրտա ու միջոտ գործարաններու հեղձուկ մթնոլորտին մէջ՝ չկարենալով տակալ աշխատութեան, զոր յառաջ կը մղէին մեքենաները և իրենց մեքենայ դարձած ընկերները։

Պէտք է մտնալ նաեւ թէ փախստական զինուորացւոն երբ որ մը վերադառնայ, ուղղակի գործանոյ պիտի առաջնորդուի, և իրեն զտաղիքներու յատուկ պատիժ՝ կրկնապատիկ ծառայութեան պիտի դատապարտուի։ Իսկ եթէ բնաւ չի վերադառնայ, արդէն մեռած է ազգին համար. Տէրը ողորմէ հոգուն։

Միակ մէկ յօդուած չի բաւեր սոյն

Անարդիա Գոլէն,

Մարգուան.

նիւթը սպառելու, ուստի կ'ամփոփուինք այլևս, բայց բնականաբար չենք կրնար զսպել մեր ցաւը, ինչպէս նաեւ մեր զայրութիւն, երբ կը խորինք թէ ինչ որ բազմահոլով դարերու ընթացքին մէջ, աւելի աննպաստ պայմաններու տակ, չկրցան ընել սուրն ու հուրը, աւարն ու աւերը՝ պիտի իրադարձեն զինուորական ծառայութենէ խուսափելու սոյն միջոցները — խակ և անյարմար ամուսնութիւն և փախուստ հայրենի հողէն։ Առաջինին գործած նախնիներուն հաւատարմ գտնելու համար հեռուները թափառելու պէտք չունինք. մեր հարեան ազգայնութեանց ընտանեկան աննախանձելի պայմանները և անոնց աղէտալի հետեանքը պերճախօս ապացոյցներ են։ Իսկ երկրորդին համար՝ ճոխ է մեր ազգային պատմութիւնը։ Մեր գոյութեան պահպանումին հզօր ազդակներէն մին եղած է ընտանիքը. մինչ աւոր աղարացումին՝ արտագաղթը, պանդխտութիւնը. ու այսօր երբ առաջինին խանգարումը կը մշտնաջ երկրորդին, պէտք չմնար եզրակացնելու թէ մօտալուտ է արտուր վախճանը՝ անկումը...։ Վայ իրենց ազգին կործանման սատարող վատ դատալիքներուն։ ազգասիրութիւն, սէր ես, սէր...։

Փրոֆ. Գ. Յ. Կիւլեմն

ԳԱԻԱՌԻՆ ԴԵՐԸ

ԱԶԳ. ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

Տաճկաստանի հայ ազգաբնակչութիւնը ցրուած վիճակի մէջ կը գտնուի գաւառներու մէջ՝ ամեն կողմ։ Պոլիս և Իզմիր իրենց չընկալանքով բազմաթիւ հայ բնակչութեան։ Թուրքիոյ արեւելեան կողմի նահանգներուն մէջ հայերը կը կազմեն որոշ և պատճառելի սակի՝ երկրէն բնակչութեան մէջ։ Եւ ուր որ հայութիւնը կ'ապրի, հոն կան հայկական բնորոշ չ

պայմաններ։ Հինէն ի վեր կրօնական հաստատութիւններ, վանքեր և ուխտատեղիներ իւրաքանչիւր հայաբնակ վայրի շրջանակին մէջ ունեցած են իրենց գոյութիւնը։ Այդ յիշատակարաններուն ընդերկար կապուած է հայ ժողովուրդը՝ հաւատաւոր ջերմեռանդութեամբ մը, որ տակաւ հայ ցեղին նկարագրին մէկ զըլխաւոր գիծը կազմած է։ Մերժելով հանդերձ այն գաղափարը թէ կրօնական յի-

շատակարանները ամեն ինչ են ժողովուրդի մը կեանքին ու վերածնութեան գործին մէջ, հարկադրուած են պահ մը մը տածել այն որոշ դերին նկատմամբ, զոր ցոյց տուած են պատկառելի հինաւուրց սովորութիւններ, կրօնական ըմբռնումներ ու հաւատալիքներ՝ մեր ցեղին պատմական ուղղութեանը մէջ, ուր անիկա թատր եկած է իբրեւ գերազանցօրէն կրօնական ժողովուրդ: Հայկական կեանքը, իր բոլոր յատկանիշներով, խտացած է գաւառներու մէջ: Հո՛ն է որ կարծես աւելի ըմբռնուած է հայութիւնը, ազգային ոգին: «Հայ Բրնատնեայ Լնք» կ'ըսէ հայ գեղջուկը կամ հայ գաւառացին, և ամեն ինչ կը լմնայ: Ա՛յ պարտականութեան գաղափար, ազգային ոգի, բարեգործական ըմբռնում, ամեն, ամեն բան կը շրջանափուր այդ բացարձակութիւնով: Հայկական սովորութիւններ, ընտանեկան կեանք և ընկերային գործունէութիւն՝ գաւառին մէջ ունին իրենց ուրջ և աչքառու գրոշմները, հայկական: Մէկ խօսքով հայ կեանքը խտացած է գաւառներու մէջ, ուր կարծես տակուին այլատեսութեամբ աղաղակով համեմատութիւն մը չէ ստացած:

Բայց թէ գաւառացին իր քանակով ու դիրքով արդարացուցած է ցարդ իր գոյութիւնը, կրցած է ցոյց տալ որոշ բնականաւորութիւններ և յաջողած է ազգային կեանքին մէջ հանդէս գալ իր շեշտւած դերով: Այս պարագան է որ հետաքրքրական կրնայ նկատուիլ իր կեանքին վերաբերմամբ: Արդեօք հայկական յիշատակներու և յիշատակարաններու պահպանքը գաւառացի, գաւառացին վերջացած կը համարի իր դերը, թէ ասկից աւելին բրած է արդէն: Հոս է հարցը: Կրնայ գաւառը շատ գեղեցիկ գործ մը կատարած ըլլալ, իբրեւ հայ կեանքին խտացումը, բայց ատիկա բաւական չէ՝ իր դերը կատարած ըլլալու

համար: Գաւառը պէտք է իր պատմական նշանակելի տեղն ունենար համահայկական կեանքին մէջ և ունենար հասարակական շինիչ գործունէութիւն մը, որ գաւառական միջնավայրէն դուրս ելնելով տարածուէր բովանդակ հայկական վերածնութեան սահմաններուն մէջ ալ:

Տաճկաստանի Հայոց ազգային վերածնութիւնը պատմական հսկայ երևոյթ մըն է այլևս: Վերջին յիմնամեակին մէջ հայկական պատմութիւնը կ'ստանայ ձևաւոր և ուսումնասիրելի երևոյթ, որ վեցհարիւր տարուան անիշխանութեան շրջանին մէջ կրկնուած դէպքերէն քիչ մը տարբեր եղելութիւններ կը տեսնուին՝ ցրուած: Մտաւոր զարթոնք մը, ազգային վերածնութիւն մը կը ստեղծուի: Հայկական աշխարհիկ լեզուն կը նորոգուի Միլիթարեաններու ազդեցութեամբ ու արեւմտեան ուսման վարական ոգիին տիրապետութիւնով Հայոց Ազգային սահմանադրութիւնը կը կազմակերպուի, տակաւ կրթական գործունէութիւն մը ընդհանուր կրթական շարժում մը յառաջ կը բերէ, Հայկական բեմ կը կազմուի ու վերջապէս մտաւորական կեանքը նոր թափ մը կ'առնէ: Ի վերջոյ հայոց քաղաքական կեանքը կը բոցավառի: Հայ կեանքին վերածնութիւնը կը կատարուի: Ինչ կ'ընէ սակայն գաւառը Ազգ. Վերածնութեան այդ յոյժ գնահատելի գործին մէջ, աշխատութեան ի՞նչ բաժին կը տանձնէ:

Դժուար է այս պարագան մանրամասն քննութեան մը ենթարկելը. ատաղձը կը պակսի: Բայց դիւրին է որոշ բաներ մը ըսել, հաստատող՝ թէ գաւառը անտարբեր կերպով ու ձեռքը ծալած չէ որ ընդունած է ազգին վրայ հասած ամեն շնորհ: Մեր ազգային, քաղաքական ու մտաւորական կեանքին մէջ մեծ է եղած գաւառին դերը և յոյժ նշանակելի: Թողով այն՝ թէ ազգ. գործիչներէ շատ

չատեր, նոյն իսկ եթէ իրենց միջավայրին, — գաւառին — մէջ չեն գործած, այդ տակաւին ապացոյց մը չէ թէ անոնք գաւառացի չեն եղած, նոյն ինքն գաւառական հողին վրայ ազգ. վերածնութեան առաքեալներ դառցած են գաւառացիները: Հայկական գրականութեան մէջ գաւառացի գործիչներ չեն պակսած և Հայ Մամուլն ու Հայ Գրականութիւնը իրենց լաւագոյն գէմքերը գաւառացիներէն առած են, Հայ աշխարհիկ լեզուի նորագութեան գործին մէջ կրկին արձամարնելի չէ գաւառացի գործիչներու դերը: Աղգային կեանքը կենսունակութեան մէջ գաւառացի հայեր որոշ, շատ որոշ են եղած իրենց լաւ ու բարերար դերին մէջ: Աղգային սահմանադրութեան պատրաստութեամբ ասեն, սարքուած բոլոր ժողովրդային ցոյցերուն մասնակցողները և անոնց պարագլուխները ամենամեծ թւով գաւառացիներ էին: Գաւառներու մէջ ամեն կողմ կազմակերպուած լսարաններ, ընկերակցութիւններ, ուսումնականներ և այլն, որոնք ապա բռնապետութեան միջոյով մէկիկ մէկով փճացած են, կըրնան մեծագոյն ապացոյցներն համարուիլ գաւառացիներու արթնամտութեան: Հայկական բնիկ գաւառներու մէջ ևս գործած է սիրողներու ձեռքով: Իսկ Հայկական Յեղափոխական շարժումներուն ճոյցերուն և Ապստամբութիւններուն մէջ գաւառը իր իսկ հարազատ արտայայտութիւնը կ'ունենայ միշտ: Գում գալուի, Պապը ալիի և Պանք օթօմանի ցոյցերը, թէև Պոլսոյ մէջ տեղի ունեցած՝ աւելի գաւառական բնոյթ կը կրեն, ստուարութիւ գաւառացի գործիչներու մասնակցութեամբը: Սասունի և Զէյթունի ապստամբութիւնները՝ գաւառի սրտին վը-

րայ և գաւառացիներու արիւնոյ՝ մշտն կարմրցած են: Գաւառներու մէջ տեղի ունեցած քաղաքական տէրօրներ, յեղափոխական գործողութիւններ և այլն ի վեր կը հանեն գաւառացիին գործօն դերը: Հայկական վերածնութեան մէջ, ուր սուր և զրիչ հաստատար գործածուած են գաւառացի հայերուն կողմէ:

Անա գաւառացի հայութեան դերը ազգ. վերածնութեան գործին մէջ, անցիալ շրջանին մէջ, ինչ է սակայն անոր դերը հայկական ժամանակակից կեանքին մէջ: Եթէ պատմութիւնը կրնայ ներկան բաժանել, և ուրեմն անիրական չէ խոստովանիլ թէ այն գաւառացին, որ անցեալին մէջ ազգ. վերածնութեան գործին մէջ կատարեց իր առաքելութիւնը, այդ մը և նոյն զանգուածը նոյն դերն է որ ըստանձնած է հայկական առաջդիմութեան գործին մէջ: Կեդրոնը անգոր է այլևս և անլաւական՝ երկրին պէտքերուն հասնելու: Պոլսոյ աղգային կեանքի սիրտը ներկայացնելէ պէտք է դադարի այլևս: Աղգային կեանքին սրտը գաւառին մէջն է անուամիկ: Անա հայկական գաւառային կեդրոններ, ուր շարժում կայ, կեանք կայ, գործունէութիւն կայ: Անա կարինը, Սըվազը, Վանը, Մարզուանը և այլ տեղեր, ուր հայկական վերածնութեան սաղմերը կ'ուռճանան, կը բարգաւաճին, ու օր մը, գեղեցիկ ու մօտաւոր օր մը իրենց ոսկի պտուղներն ու առատ հունձքը կուտան:

Գաւառը՝ իր ոյժերով մրայն: Հո՛ն է առաջդիմութիւնը: Գաւառը՝ իր միջավայրով: Հո՛ն է գործունէութեան դաշտը: Գաւառը՝ իր միջոցներով միայն: Հո՛ն է լաւագոյն ուղղութիւնը:

Մարգուան

ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆ

ԻՐԻԿՈՒՆ Է ԱՇՈՒՆԻ...

Իրիկուն Է աշունի...

Ո՛չ ոք ինձ չափ սրտում է,
Վերքս նորէն կ'արիւնի,
Նըծղեհի կեանքս է դըժնէ...

Իրիկուն Է. Իրիկուն.

Ցաւերուս հետ՝ քրտորէն,
Կարօտիւն եւ իրիկուն
Լուռ կը փայլեմ դաշտերէն:

Ես կը փայլեմ: Կ'անցնին իմ
Քովեա ժրպտով մը հետքին
Ուրախ զոյգեր մտերիմ:

Հեզոտ ժրպտով մ'անանուն,
Կարծես անոնք էր ժրպտին
Իմ դառնացած սերերուն...:

ՎԱՇԽԱՌՈՒՆԵՐԸ ԳԱԽԱՌԻ ՄԷՋ

Ժողովուրդին ու մանաւորապէս եր-
կրագործ, աշխատաւոր, աղքատ գաւա-
կարդին՝ նիւթապէս թէ բարոյապէս՝ ա-
րիւնը ծծող անյագ, անսիրտ տգրուկներն
են վաշխառուները գաւառի մէջ և եթէ
մանրակրկիտ վիճակագրութիւն մը, քըն-
նութիւն մը կատարուի, պիտի տեսնուի
որ Թուրքիոյ մէջ մարդիկ առ հասարակ
հարստացիք են, կալուածներու տէր, ա-
յա, եփեկեփ, պէյ կամ արկաւ, ու մանա-
ւանդ Ա.Ղ.Ա. եղած են՝ վաշխառութեան
միջոցաւ, քան թէ գիւտերու, ճարտա-
շարութեան, բնական շահագործումներու
չնորձը՝ որոնք թէ ո՛ր աստիճանի դոյու-
թիւն ունին կա՛մ խեղճ ու կրակ վիճակի
մէջ կը գտնուին, յայտնի է ամէնուն:

Վաշխառութիւնը գլխաւորաբար երեք
եղանակով կը կատարուի գաւառին մէջ.
Ա. դրամական փոխաւորութեամբ, Բ. ար-
մըսիս փոխաւորութեամբ և Գ. առեւտրի

ձևին տակ:

Գաւառի մէջ այս երեք միջոցներով
հարստանալու համար խոշորկեկ դրամա-
գլուխներու պէտք չունին մարդիկ. կը
բաւէ որ անգամ մը մէկը ինքնազրկու-
մով, ներքի կամ ոչ ներքի որեւէ եղա-
նակով մը, իր ապրուստը հոգալուելէ
վերջ՝ քանի մը ոսկի աւելցուցած ըլլայ.
ա՛լ ճամբան բայ է իր առջև, կ'ընդգըր-
կէ վաշխառութեան ասպարէզը և քանի
մը տարի կ'անցնի չանչնիր, կը տեսնես
որ այսինչ աննշան անձը հարստացիք է,
նարդ եղեր է, փարա ունի և իր անու-
նին կցուած է անխուսափելի աղաւ կամ
աւելի փափկանչիւն՝ եփեկեփ պատուա-
նունը:

Նկատելի է որ գաւառի մէջ վաշխա-
ռութեամբ հարստացողներու մեծամագ-
նութիւնը Հայերը կը կազմեն. Թուրքե-
րը առաւելապէս կառավարական պաշ-

գուրի, սեպենք թէ կ'ըլլայ 60 ղրշ. փոխառուն յաճն կ'առնէ կալի ատեն իր պարտքը վճարել ցորենով, ինչ որ ըլլայ կալի վրայ ընթացիկ գինը. համարենք թէ 10 ղրշ. ըլլայ գրիւը, փոխառուն այդ մէկ գրիւին տեղը վեց գրիւ կըստյալուի սալ. Երբեմն ալ դրամը անհրաժեշտութիւնը կը պարտաւորէ գիւղացին դիմել վաշխառուին. փոխ կ'առնէ անկէ ոսկի մը և կը խոստանայ կալի ատեն չորս գրիւ ցորեն տալ. իր այդ խոստումը պիտի կատարէ, նոյն իսկ եթէ կալի ատեն մէկ գրիւը արժէ մէկ ոսկի:

Առևտուրի մէջ վաշխառութեան նշանք երևան կուգայ առասպելական բազմագլուխ վիշապի նման. ինչ նենգութիւններ, ինչ խարդախութիւններ ի գործ չեն դրուիր արդեօք. անիրաւ շահերու յորդանոս աղբււր մը կը դառնայ ան անխիղճ վաշխառուներու ձեռքին տակ: Նիւթեր կը գնուին կէս գինով, նիւթեր կը ծախուին կրկնապատիկ, քառապատիկ գներով. ստախոսութիւնը, խաբէրայութիւնը պարզ ու բնական իրողութիւններ կը համարուին երանելի մարդոց համար: Ես կը յիշեմ տարիներ առաջ, գիւղացի Հայ մը որ կրնակ մը ունէր հազ. 4—500 ղուրուշը պարունակութեամբ, ան այդ կրկնակին միջոցաւ ո՛չ միայն կը պանէր իր բազմանդամ ընտանիքը, այլ քան, մի տարուան մէջ ի վիճակի եղաւնորսուն մը կառույցանելու, արտեր գնելու, ջորի ծառայ պահելու. անհաւատալի կ'երևար ձեզ, այնպէս չէ՞, և կամ նրաջ մը յայտնայդ նրաջը դիւրաւ կրնաք լոբորենել, երբ ձեզի յայտնեմ թէ, այդ մարդը խեղճ գիւղացիներուն կը ծախէր սիւլֆատրոյն մէկ ցորենը մէկ ղուրուշի. և երևակայեցէք որ տրամը 60 ցորեն է և արդէն կրնանք գնել 60 փարայի չիշ մը, որ մէկ տրամ կը պարունակէ...

Գաւառի մէջ ապրանքներ ալ կը փոխանակուին ցորենով, իւղով, ոչխարներով և արջառներով միշտ ի վնաս գիւղացիին:

Հարսանիք ունի մարդը. տղան պիտի կարգէ, կը դիմէ աղային. աղան քանի մը ոսկի կուտայ, քանի մը ոսկիի ալ ապրանք, որոնց գները ապառաւար կանխիկով վաճառուածին կրկնապատիկը կ'ըլլայ. յետոյ գումարին տոկոսը վրան կուգայ, մուրհակը կը տաւորատուի, ժամանակը կը յրանայ, չի վճարուիր, կը նորոգուի, ամուսնացիալը պանդխտութեան կը ղրկուի, և կ'աւելիւր յամներով հալիւ պարտքին տոկոսն տուկոսը կը վճարուի. և ահա օր մըն ալ մարդուն տունը կամ արալ ձեռքէ ելած է արդէն. այս ալ առևտրական վաշխառութեան ուրիշ մէկ պատկերն է...

Վաշխառութիւնը գաւառի մէջ աղէտներ ու փճացումներ պատճառած է ու կը պատճառէ. մենք չուզեցինք խօսիլ անոր բարոյական աղէտներուն վրայ. ո՞վ չի գիտեր թէ վաշխառուները ինչ անամոթ առաջարկներ կը ներկայայնեն և ընտանիքներ կ'ապականեն իրենց լպիրշութիւններով...

Ո՞վ պիտի տանի ու խորշը դարմաններ այս տխուր կացութեան: Կառավարութիւնը անշուշտ. բայց ինչպէս. այս մասին օրէնքիս արամադրութիւնները անգործադրելի կը մնան ու անբաւարար են, երկրագործական պանփաները յաւէտ վաշխառուներուն գործը կը դիւրացնեն, քան կ'օգտնողակն փոխառութեան կարօտ դատակարգիւն. Եւրոպայի կամ Ամերիկայի նման փոխառու դրամատուներ չկան գաւառին մէջ. խնայողութեան արկղանք գոյութիւն չունին. ինչպէս պիտի դարմանուի չարիքը կամ գէթ մեղմացուի մշնչե որ Սահմանադրական կառավարութիւնը իր գերն ու գործերը կատարէ:

Մեր քաղաքական կուսակցութիւնները յաւ չըլլա՞ր որ փոխանակ սին վէճերու և շակառակութեան տեղը տալու գաւառին մէջ. ոյժ տան բանւորական, գիւղացական միութիւններու, խնայողա-

կան անտուկներ, աշխատանքի տուներ հաստատեն, աղքատ ժողովուրդին փոխառութեան դորձերը դիւրացնեն, շահակցական — համայնական խանութներ տրամադրելի ընեն և թուժք կանգնին

Մարգուսի

անդուծ աշխատուներու շահատարութեանց առջև. ես կը կարծեմ՝ թէ, ճշմարիտ ազգասիրութիւնն ու օգտակար ըլլալու անկեղծ բաղձանքը և բարի կամեցողութիւնն է որ միայն կը պակսի...

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ (ՆԵՐԱԾՈՒՄ)

Եւ միթէ յեղափոխութիւնը չէ՞ր որ առաջին անգամ գոյութիւն ստացաւ իմացական աշխարհին մէջ, ու հոն պարզեց իր օրհնաբեր գործը յաւերժական, առէին մտքերը յեղաշրջելով, անդին ոսկեգարեան դռները բանալով, հոս գիտութեան ու լուսաւորութեան տաճարները կանգնելով, ու հոն գիւտերու և դեղարուեստներուն հրաշալիքները սփռելով:

Յեղափոխութիւնը չէ՞ր որ երկրորդին՝ մտաւ կրօնական աշխարհին մէջ, ու հոն խորտակելով հաւատաքննութեան ասեանները, հատառեց խղճը կատարեալ ազատութիւնը. բա՛ք, ան չէ՞ր որ քօղամերկեց կրօնը իր մահաշնոյ աւելորդապաշտութիւններէն, և ի վեր հանեց անոր խկախան մաքուր օգին՝ որ անկախ ու ազատ հաղորդակցութեան մէջ մտնելու համար մարդը իր անձանքին՝ Աստուծոյն հետ:

Յեղափոխութիւնը չէ՞ր որ ի վերջոյ ըշտապելով դէպի քաղաքական աշխարհը, իրաւանց հաւասարութիւն հռչակեց, արգարութեան ու եղբայրութեան սրբազան օգնելով գոնեայնեց մարդ անհատը, որ պա՛հ մտառ իր հեծէր ու կը տառապէր անադորոյն բռնակալներու վատ ճիւրաններուն տակ. անոնց մահաբոյր դաւհերը իրենց հիմներէն ստրկեցուց, փշրեց, կոտորեց անոնց ժանդատ չղթաները, որոնք ազատ ծնած՝ մարդկութիւնը՝ ամէն տեղ կապելու, կաշկանդելու կը ծառայէին. և

(շարունակելի նախորդ թիւէն եւ վերջ)

ահա ազատութիւնը արծիւի սրածուկ թեւերով՝ աւելի բարձրերը սկսաւ սաւառնիլ:

Այո՛, Յեղափոխութիւնն է որ տակաւ կուգայ իր վերջին առաքելութիւնն ալ կատարելու անտեսական աշխարհին մէջ, ուր շահագործողն ու շահագործուողը ընչազուրկն ու սեփականատէրը, անօթին ու երջանիկը այսօր յառաջ կը տանին իրենց պայքարը աւելի սուր հանդիմանքով և աւելի ուժեղ թափով մը: Յեղափոխական փրկարար ուժը հեռովնուէ անհրաժեշտ կը դառնայ այդ ծովափրփուր ատպարեղին մէջ երջանկութիւն, տարածելու համար աղքատին ու չինականին խրճիթներէն ներս, հոց տալու համար անօթին, գործ՝ աշխատող բաղուկներուն, և սիրտ՝ նախաճիւղութեան ողի, վնասող ու անճարակ հոգիներուն. վանդիքնութիւնը ամենուին է, երկիրը մեր ժառանգութիւնն է, սրուն օգուտները՝ հաւասարապէս վաշխել, իւրաքանչիւր մարդ անհատի բնական ու հարազատ իրաւունքն է միշտ:

Կրտսէի թէ մարդ իր ազնուաշուքիչ յատկութիւններէն զատ ունի նաեւ վատ թարազուղիչ բաղձազան մտաւններ դէպի չարք, դէպի յուլին, գաղանական վայրագ բնաւորութիւն մը իր նմաններուն արիւնք խմելու տարիժան: Յեղափոխութիւնը տնա իր ճշմարիտ դերին մէջ կուգայ իրեն անաչառ հրեշտակ՝ մարդը իր այդ

գետնաքարշ կացութենէն վեր բռնելու և թօթափելու համար անոր ուսին բեռցող անողոք լուծերը, հոս քննադատելով ու բողոքելով անոր անարդար պիղծ արարքներուն դէմ, ու հոն խստօրէն դատապարտելով անօրէն թշնամիներու ընթացքը քաղաքակրթութեան հանդէպ, երբեմն ջախջախելով որդնոտած գլուխները վատ մատնիչներու և անզգամ դաւաճաններու ու երբեմն ժողովուրդը բերելով գլխակցութեան իր պարտքերուն ու իրաւունքներուն, որպէս ճշմարիտ մարդ ու ճշմարիտ քաղաքացի:

Շատեր կը խաւին Յեղափոխութիւնը երաւր բերան առնելէ, կ'անարգեն այդ սրբազան զաղափարին ծառայող պաշտելի հերոսները: Եւ միթէ Համիտական բռնակալութեան չրջանին՝ քրէական յանձանք չէ՞ր նկատուեր անոր մասին մատեն, խօսիլ կամ գրել...: Շատեր ալ Յեղափոխութիւնն ու կուսակցականութիւնն կը շփոթեն իրարու հետ: Եւ ոմանք ալ կ'առարկեն բանով. «Քանի որ քնաշրջում կայ տիեզերքին մէջ, ու ամեն բան այդ մեծ օրէնքին ներքեւ կը յառաջդիմէ դէպի լաւը, և դէպի կատարելը, ուրեմն ինչ հարկ դիմել յեղափոխութեան նման անօգուտ, բռնադատիկ միջոցներու, և գործել այնքան անեղ սճիւրներ՝ որոնք գրեթէ աշխշով կը փոխարինուին»: Ատոնք պատմութեան անգիտակ եղող անձերն են, որոնց գոյութիւնը օգտակար, չինիչ ըլլալէ շատ հեռու է աշխարհին: Պէտք է լաւ գիտնալ որ՝ ամեն բան թուղու իր բնական ընթացքին մէջ, և ամեն բան ակնկալել բնութեան ու նախախնամութեան անաչառ օրէնքներէն, լծացում ու անշարժութիւն կենթադրէ, ուր ո՛չ կեանք կայ, և ո՛չ ալ յառաջդիմութիւն: Այն ազգը որ չի գիտեր յեղափոխուիլ, որ չի գիտեր ըմբոստանալ իր գոյութեան պաշտնացող նիւթական կամ բարոյական մահուան, մեռած պէտք է նկատուի:

Ինչու որ իրական մահը արդէն ուշ չէ անոր համար, ա՛յս է պատմութեան անողոք վճիռը: Աստուած և բնութիւն մեզ կ'օգնեն այն ատեն, երբ գիտենք նախ մենք մեզի օգնել: «Շարժէ՛ որ յառաջ դիմես» ա՛յս է եղած դարերու արդար պահանջը, և ա՛յս պիտի ըլլայ ապագային համար ևս: Եւ միթէ լեզափոխութիւնը իրերու անբնական վիճակը բնականին վերածելու, լաւագոյն, բարձրագոյն վիճակի մը փոխարկելու միտում մը ճիշդ մը չէ՞:

Յեղափոխութիւնը՝ բնաշրջումի այդ նեղուկը հարազատ, անվեւերօրէն կ'ընթանայ կռիւներու ու երբեմն ալ սճիւրներու մէջէն, անսպասք կը քալէ փշալից ու արիւններանգ շաւիղներէ, ինչպէ՞ս քալեց Յիսուս մահուան ճանապարհէն, բայց միշտ վստահ թէ խաչէն վերջ կայ յարութիւն, ջրնեղէն վերջ՝ ծիածանք: գիտնալու ենք որ այն անբաւարար հոծ ամպերուն ետեւ թաքնուած է լուսավորայ Արեգ մը, որ կը շողայ իր վեհափառութեան մէջ՝ կեանք ու կենդանութիւն սփռելով ամեն ուրէք: Վսե՛մ է անոր նպատակը, և սուրբ է ընդգրկած դատը: Ազատութիւնն է իր ամենալայն առումով, որ կը մագնիսէ ամեն Յեղափոխական:

Բայց որո՞նք են սա Յեղափոխականները, որոնք այնքան ազմկիր են աշխարհը: — Անոնք՝ որ տառապել են մարդկութեան համար, անոնք՝ որ կենդանութեան առտեն՝ թուքին ու մութի՛ն արժանացել են իրենց նմաններուն, և գերեզմանէն վերջ՝ հասկցուել ու պաշտուել են յաւէրժապէս: Այո՛ անոնք՝ որ լաշիւր են քոյառնեռուն համար, և անոնց արտատուաթոր աչքերը՝ արիւններով են սրբել, մինչդեռ Ազատութեան հրաշափառ ծաղիկն ալ նոյն արիւններով է ոռոգուել,

Ըսէ՛ք, ովքեր էին Սոկրատներ, Գալիլէներ, Մարտիրոսներ, Վոլթէռներ ու

Հիւկօներ. եթէ ոչ անմահ Յեղափոխականները իմացական աշխարհին:

Ո՞վքեր էին Կոմիւնիկոսներ, Պուտաններ, Զրադաշտներ, Լուսաւորիչներ, ու Լուսերներ, եթէ ոչ հաշտելի Յեղափոխականները կրօնական աշխարհին:

Ո՞վքեր էին Վարդաններ, Գրովիէներ, Մեռապօներ ու Կարիպալապներ, եթէ ոչ անզուգական յեղափոխականները քաղաքային աշխարհին:

Եւ ո՞վքեր էին Հարլա Մարքաներ, Կառլսկներ ու Փոռլսներ, եթէ ոչ աւետարեա Յեղափոխականները անասական աշխարհին:

Յեղափոխականները մեծագոյն բարերարներն են մարդկութեան, չինոց ձեռքերը քաղաքակրթութեան արձանին, և յառաջագոյն դիւտպուները ազատութեան սուրբ դատը. վասնզի անոնց դործն է յեղաշրջել մշտաւայր, և զարգայնել ընդունակութիւնները, քանի որ (վերջ ներածական)

ը: դունակութիւն ու միջավայր՝ ազգի մը յաջողութեան ու բարձրացման էական պայմանները կը կազմեն:

Ինչո՞ւ ուրեմն վախնալ Յեղափոխութենէն ու Յեղափոխականներէն. Համարի և Նիկօլայի նման արիւնարբու հրէշները թող սարսափին անոնց որոտագոյ ձայնէն. յանուն կրօնի և յանուն փրկելի՝ ժողովուրդներու ազխութիւնը չաւագործող, և անոնց քրախքով: պարտաւորող պարտաւորձ սեպղութիւնները թող երկնչին յեղափոխական բժրոտ շարժումներէն: Դրամը աստուածայնող, ու մա՛րդը սարկացնող անյագ գաբիթականները թող վախնան յեղափոխական անեղ ուժէն մերձեցումէն:

Շատ բան կը պարտըք Յեղափոխութեան, և շատ բան Յեղափոխականներուն:

Նուիրում անոր փրկարար ուժէն, և պաշտում անոնց որբաղան յիշատակին:

Մար. ուսն

ԹԱՂԷՈՍ ԺԱՄԿՈՅԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ս. Դ. Հնչակեան տիանաւոր գործիչ և տաղանդաւոր հեղինակ Տեառ Ս. Սապա-Գրիգորեան երէկ քաղաքս ժամանելով տեղւոյս Մասնաճիւղի Գրիգորեան մէջ երէկ և այս իրիկուն երկու սրանչիւ ու անզուգական շանտիսութիւններ լրատ «Ս. Դեմոկրատիան և Ազգութիւնը» և «Քաղաքական կուսակցութեան» դերը հետական կիսնքի մէջ» նիւթերու վրայ: Ժանրամասնութիւնք յաջորդւ:

* Վրճակիս Ս. Առաջնորդը երէկ մեկնեցաւ դէպք էջնորածին Կաթողիկոսական քնարութեան ժամանակցելու համար վրձակա կողմէն: Իսկ իւր աշխարհային տրամադրութեամբ արդէն ութ օր առաջ ուղևորած էր թիրթիս խմբագիրներէն Տեառ Բարութիւն Դարամանեան: Դարձեալ թիրթիս թուրքերէն լաժնի իմացողութիւնէն Տեառ Մարտիկ Սիմեան (Մարտի), որուն թուրքերէն անունաւորու:

րը իր շուրջ համակրութեան չըջնալ միտեղծած են. ազանաւորակաւ գործերով մեկնեցաւ չըջնալ գաւառները իր չըջած վայրերէն տալաւորութեան նիւթեր պիտի զրկէ մշտ:

* «Իրիկուն և առաջին...» աստուաւորին հեղինակն է բանաստեղծ՝ Արամ Էֆ. Գաղանձեան, որուն տարագրութիւնը մոռցուած էր սխալմամբ աստուաւորին աակ գնելու:

* Սիւթէսարրփութեան կողմէ թերթիս ուղղուած պաշտօնագրով մը կը ծանուցուի թէ գինուորական չըջանակներու հետ գործ ունեցող քողաքաղիները, անոնց միջնորդի ուղղակի իրենք գրման: Անոնք որ միջնորդներու միջոցաւ կը գրմեն անոնց գործերը չի պիտի տեսուին:

Ursolusker՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՂԻՊԵԱՆ

Ինքաւորակաւ՝ ՄԻՐԱՍ ԻՄԷՐԵԱՆ

Տղ. ՄԱՐԿԱՆԵԱՆ ԵՆ ԻՄՍԿՐԵԱՆ

سنقورلی مخبر مخصوص مزدن

سنقورلی مخبری بود دفعه آینده کی تهییج آمر
و صوک درجه مدعی واقع شیعیه بی اصحاب
وجدان و حیمه عرض ایدیور .

بوندن ایکی ماه مقدم برای تحقیقات دنک
معدننده بولنان سنقورلی ضابطان عسکر یسندن
یکباشی بک و طابور کاتبی قادر و یوز باشی
حسن افندیلرک معیتده کولکلی عسکر صفیلر
مستخدم سنقورلیلی صحایان لیئون نام اون سکر
یاشلرنده ناموسلی ر کنجه مرقوم ضابطلردن
طابور کاتبی قادر و یوز باشی حسن افندیلر
صورت جبریده فعل لواطه اجراسنه جرأت
ایلملری اوزرینه مرقوم لیئونک جان و ناموسنک
محافظه سی استمدادانه فریادلرینه قوشان اهالی
محترمه ایله مسافرتّه اوراده بولنان یوزغاد
مبعوثی ادیب بک واقعه جنایه بی عیناً مشاهده
ایلملرک متجاسرلر درحال دردست و توقیف
اولمشدر .

بو بایده کی مطالبه مزنی کله جک نسخه ده
عرض ایده جک مزدن تحقیقات لازمه نک اجرا
سیله ایجابنک اجراسی ضمنتده عدلیه و جریسه
نظارتلرینک نظر دقتلرینی جلب ایدرز .

شهر تشرین اولک ۲۵ نجی کیجه سی حو-
ضده مأمورین حکومتدن درت کنجدر حوضه
ساکنلردن استبان افندی بکجیان خانسی قپو-
سنه کیده رک ایچرو کیرمک ایسته مشسلر ایسه ده
بکجیانک زوجیه سی زوجنک اوده بولندیغندن
طولانی قبولده معذور بولندیغنی بیان ایلمیکنده

قپویی تمهملکه باشلایوب جبراً خانه ده دخیوله
تشبث و بر چوق رزالت و دانسته جرأت
ایلملر . واقعه بی خبر الان مأمورین ضابطه
هان پولیس و ژاندارملر اعزامیله متجاسرلر
دردست و دائرة حکومتیه تسلیم ابدلیکی حالده
مع التاسف درحال صالیورلدکری و ده غیری
فرداسی کون ناموسی پایمال ایدلمک ایستیلان
عائله نک حقوق و ناموسی رئیس حکومت دار-
فندن محافظه ایدلمسی لازم کلور ایکن بالعمس
قائم مقام بک طرفندن مظلونلر حمایه ایچون اولمش
اولی که ناموسلی و بیچاره عائله نک حوضه دن
تبعیدینه امر ویریلور .

بو بایده ایضاً حاکمز کله جک نسخه ده وضع
اولنه جقدر .

متصرفز سعادتلو احمد ماجد بک افندی بو
هفته لادیده عزیمت و عودت ایشدر .

بو هفته چهارشنبه کونی س . د . هنجاقیان
جمعیتک استانبول مرکز عمومیه رئیس صبح
کلیان افندی بر قاق کون قالمق اوزره اماسیه ده
کله جقدر .

جانیک سنجاغی متصرفلغه

آچیق مکتوب

بو کونلرده صامسون جوارنده بر طاقم
اشقیا چتله لرینک ضولاشمقده اولدقلری کمال تأثر
له استخبار اولندیغندن شمده ده قدر وقوع بو-
لماش اولان بو کبی اشقاوتلرک بر آن اول اوکی
التمق اوزره اشقیای مرقومانک هان دردستلری
ایچون تعقیبات لازمه نک اجراسی ضمنتده جتیک
متصرفلغنک نظر دقتی جلب ایدرز .

هر طرفده فلاکتلر ، سفالتلر.. حاصلی ،
 کیم شو اویغونسزلقلری اوکارسه
 هر کیم ومان ، ملت سوزین آکارسه
 بیچارهیه نه ظلملر وار مطلق ،
 سورکون کیتمک ، اولدیرمک... محقق .

اون تموزده اورتهلنی آیدینلاندی حریت ؛
 پر قراکلیق ، اوچوروملو یولدن قورتولدی ملت .
 اوت ؛ او کون کندمزه بئلیکمز ویرلدی ،
 بو اولوجو جسته ملت یکی باشدن دیرلدی .

فقط بوکون یتیمه مشدر یوردمزک اکسیکی
 قایتمدی دها اونک اک صایغولو کدیکی
 او کدیکی قایتمه جق دوناتما در ، دوناتما .
 تورکیانی یاشاته جک دوناتما در ، دوناتما .
 بونک ایله بوله جقدر قوتی اردومن ،
 بونک ایله تهله کدن قورتاراجق یوردمز ،
 بونک ایله هر کدردن ملت امین اولاجق ،
 بونک ایله کوکلره سوبنج ، امید دولاجق .
 بونک ایله اسکی شرفلر یرینه کله جک ،
 بو وطنده هر یر کبی ترقیه کوله جک .

ویرک ویرک شو زوالی یوردمزک کوز یاشی
 برآز دینسین ... برآز اونک هر طوبراغی . هر طاشی
 دردلی ، دردلی ایکلده بن هر دره سی هر یری
 دکریله پاریلداسین ؛ کوردسون کونش اثری
 ویرک ، ویرک اوت انسان بو دنیایه بر کلیر
 وطن ؛ آتجق اولادینک همیله یوکسلیر
 ویرک ، ویرک دوناتمایه .. نه کز وارسه هپ ویرک
 کچمشلرک شرفه لایق حیات کوسترک ! .

سیواس : فیض الله ممدوح

قان اغلایان هر بر قلبك امللری سونمشدی .
 اوکوز وطن ؛ بو سوکیلی ، بو مبارک آنامز ؛
 آچاق ، نانکور ، مرحمتسز ، انصافسز
 میمنتسز ، حیتسز آیاقلرک آلتنده
 هپ بیریحی و زهرلی طیرناقلرک آلتنده
 هر یانه بیکر ایله یابیحی ال صارلمش
 هر یاندن خنجر نیش ، میککری آیرلمش
 بر طرفدن یغما ایتمک ایسته یوردی دشمانلر
 بر طرفدن جان یاقیور ، قان دوکیور حکمدار
 حیتلر باغلانیور زنجیره
 هر بر مکتب فکرلره جندره
 محکملر بوتون رشوت آنباری
 هپ قیرلمش تا اوموزدن بتوکلرک قوللری
 حق دشمنی ، دوشکونلرک یابیحیسی حکومت
 هر بر حقسز بویوزوغه بویون آکش بر ملت !..
 شورده بر کوی : ایصسز ، ویران ، کیریتیلی سواققلر ،
 درد یانغی کلبه جکلرده دومانسز اوجاقلر .
 نه بر قوشو ، نه بر سورونه خرمان
 هر طرف بوش ، نه چیفت سورهن ، آکین بیچن بر انسان ،
 یالکز بر قاج سقط ، چولاق ، عملمانده ، اختیار ،
 کوزی یاشلی خاتمانی سونمش استبداللر وار .
 کویجکزی شلته جک کنجیلر کیتمش عسکره ،
 کیدنلردن جبر یوقدر قایقو چوکمش دلره
 هر طرفدن درین ، اوزون ، بر آجیقلی اوغولتو ؛
 یتیملرک او یورکلر پارچه لایان آغولتو
 ییقای دیوار دیبلرنده سوروکلتن یوقسوللر
 کوچوک طاوانلر آلتنده خسته یاتان کنج طوللر
 اورومجکلی قاپولرده قاره کلید آصیلی .

وطن قايغولرندن

دوناغا

وطنداشلر ! ير يوزنده بزه بويوك ، بر سوكيلي كوزل ير
 طبيعتك آل دكه مش ، بركتلي ثروتيه قاباران ،
 مرحمتلي سینه سنده سعادتلر . راحتلر
 صاقلایچی بر مقدس وطن ویرمش یارادن .
 بر وطن که ؛ کنیش و صاف افقلری یوجه لکه یول آچار
 تورکیانك سونیه جك استقبالی قوجاغنده یاریلدار
 بر وطن که ؛ یوغورلمش طوپراقلری آنالرك قانندن
 هر بوجاغی دستان اوقور کچمشلرك شانندن .
 بر وطن که ؛ بر ملت یختیارلق حقوقیله و مسعود
 بسلیه جك شیر اوت کنیدیسنده هپ موجود :
 طاتلی سسلی چاغلایانلر . کوپوك صاچان عمانلر .
 هر بر یشیل یاراغنده بر روح یاتان اورمانلر .
 شو کردیکك سرین . زمرد کولکه لرله طالعنهان برلری
 شرف کودن او غیرتلی اجدادمن هپ چالیشوب ایلری
 براقشدر . شلتمشدر ... بورالرده نه هوسلر یاشامش ؟
 فقط بو کون یازیق . یازیق هر طرفی تملندن قاقشامش ... !
 بر وطن که ؛ هر گوشه سی . بوجاغی
 مسکتلر . یوقسوللقلر اوجاغی
 بر وطن که ؛ بونجه ییلاق آچیلرله حالا هپ صیزلانیور
 بز عثمانلی اولادنن امداد اومودلانیور ...
 اوت . اوت او سوره کلی غدارلقلر هر طرفی خاشلاردی
 آچیله جق فکرلری پاصلاندیرر . جهالتله آشلاردی .
 شو ملتک ظلم آئده وجدانلری قاناردی
 قهر آئنده یوره کبری چاییر چاییر یاناردی ،
 اوکسوز وطن طبق بر یانقین برینه دونمشدی .

آلتند یاشان عناصردن هانکیسینه منسوب اولور ایسه اولسون بر صاحب ذکا و عرفانک ولو که :
 دیگر بر عنصری شدله تنقید ایدر یولده بولسون ، آثار و ملاحظه تی نشردن چکمییه جکز . مدا
 فعاتی بتون اوباب فکر و اذعانه براقه جفز . و بونلرک آثار قلمیه سی ایچون صحیفه لرییزی ایچیق
 بولندیره جفز ، ظن اولنورمی که بو یولده اتحاد و امتزاج عناصره موفق اولور ؟ اوت ، بعضیری
 بونی بلکه غریب کوردرلر . حالبوکه حقیقت دائماً حقیقتدر . ارمیلر ذاتاً ترکلرک آثار و حسیاتی
 افکار و مطالعاتی تدقیق ایده بیللمشلردر . فقط ارمنی ادبیاتنه ، ارمنی تاریخنه ، ارمیلرک احوال
 اجتماعیه سنه ، ارمنی ارباب ذکا و معلوماتنک محصولات عرفانه واقف پک از ترک وارددر . بونلره
 ترکیه و ارمنیجه نشرینه موفق اولدیغمز شو رساله ده ارمنی و روم قاردشلیمیزک و سائر عناصردن
 اولان وطنداشلیمیزک هویت عرفان سویه روحیه سی طانته جفز . بزه قالیرسه سنه لرحه مدت بری
 برندن ایری غیری قالمش اولان ابتدا یکدیگری نی تمامیه ، بتون روحیه ، دماغیه ، حسیاتیه طانیلی
 درکه اوندن صکره محبت و انستی حاصل اولسون . اتحاد و امتزاج میدان کلسون ... ایشته مقصدیمز !

م . ر

دردلی بر اوبا

چولق چوجق بر پریشان میدانده قالدق
 یاردم بوله مدق بیکس ، بیچاره قالدق

* *

— مرجبا ! ...

— باقدم که اوچ عثمانلی .

— سیلیری پک غملی .

— نره دنسکز ؟ ...

— اول موش ایلندن ایدک .

— شمدی ؟ ...

— شو اوبادنز .

باق ! ... شو دور مشروطیتده . نه اولیور .

صادق قوم ظالم عشرته یم اولیور .

کویا که بو ایمش تام قانون انسانلره

«چالیشقان بر ملت یم اولسون ظالمیره» .

باری سز لر قونوقلایک اووالر !.. یایلار ! ...

شو دردلی اوبایی که دردندن قان اغلار

قبول ایدک انی ، چون وطنک طوزی در ،

ایجتیمیک انی چون وطنک کوزی در ؛

چولق چوجق یالین ایاق ، چیرچبلاق ،

اوبک اوبک اوطورمشلر بر نمناک .

— فصل اوبا ؟ ... زرده کچه کلیمکز ،

صفر ، صبا ، اوکوز و سوری طواریکز .

— بتون حیوانلرییزی کوردلر چالدیلر ،

بریمزی ، یوردیمزی جبراً الدیلر .

مرآت

امانتیه

طشهره منادیسی

برنجی سنه

یشرین ثانی ۱۵ سنه ۳۲۷

نومرو ۳

عثمانیلرک قوتی ، وطنک سلامتی

(ایکجی نسخهدن مابعد)

یاشاسون حریت ، یاشاسون مساوات اوازهلری عیوقه چیقارلدیغی ، مشروطیت اداره و حاکمیت ملیه ایله اعلان افتخار ایدلدیکی بر زمانده ... بتون مدنی عالمده هر قومک حسیات و تمایلاتنه عادات و آداب ملیتته اوروپانک اک قوی حکومتلری ، اک سرت ادارهلری چارناچار بویون اکدکلی شو دورده ... بو بویله اولماز ! اوروپاده انسانلرک حریت و مساوات مطلقه سی تقدیس ایتمکده بر طاقم سیاسی جریانلر حاصل اولیور . حر فکری ، انسانیته محب ، اصحاب اذعانک تلقیناتیه بر برلری ارهلرنده ائتلافه زمین ارایورلر . ملتلر بر برینی دهه زیاده طانیغه ، یکدیگرک حسیات و تمایلاتنه ، اخلاق و عاداتنه نفوذ ایتمه چالیشیورلر ... بز نیجون عناصر مختلفه عثمانیه اره سننده بو قاعدهیه رعایتله موانست و ائتلاف ، اتحاد و امتزاج حاصل ایتمه غیرت ایتیوروز ؟ ترکلر ، عربلر ، ارناوودلر ، ارمنیلر ، روملر ، بلغارلر ، اولاحلر ، صربلر ، و سائر عناصر عثمانیه اوانسنده بر برینک فکر و مقصدینی ، حسیاتی ، تمایلاتی تمامیه اکلایه جق برتی بریله اکلاشوب طانیشه جق واسطه لره مراجعت ایتیوروز .

مثلا بو عناصرلردن بریسی ترکلرک احوال و اطوارینی تنقید ایدنجه همان بتون تهوور وحدته مغلوب اولیور ، نیچون بر اقایورکه : تمامیه قصورلر ، نقصانلر کوسترلسون . دلکیر اولدقلری ، الفت و انسیته مانع عد ایتدکلی نقطه لری ، نکته لری یورکلرنده هیچ بر شی صاقلامه دن اورته یه قویسونلر ! بر عناصر دیگرینه قارشو قصورینی ییلیر و اکلاسه تصحیحی قولای اولور .

بر قسم وطنداشلریمزک بزدن نیچون اینجندکلی بیلیرسهک اولنلرک فکرلرینی تعدیل و حقیقین ارجاع ایده ییلیرز . ایشته بزه « اماسیه » بی تأسیس ونشر ایتدیرمکه سوق ایدن بو مطالعه ، بو وطن حسی در . مسلکمزى بوکا کوره منافع وطنیه یولنده تعیین و تعقیب ایده جکر بناء علیه عثمانلی نامی

ԱՄԱՏԻՅՈՒՆ

صاحب امتیاز و

مدیر مسئولی

حایقازون طبعیان

شرائط اشترا
بر سنه لکی بر مجید
انی آیلنی یارم مجیددر

سر محردی مناس ایپکجیان

یاخود

طشره منادیسی

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی غزنه در

هر اون بش کونده بر نشر اولنور

برنجی سنه

۱۵ تشرین ثانی ۱۳۲۷

نومرو ۴

محتویات

عثمانیلرک قوتی، وطنک سلامتی

م . ر

دردلی بر اوبا (شعر)

مرآت

دونانما

فیض الله ممدوح

حوادثات متعدده

مطبعه مزده ترکیه ارمنیجه رومجه فرانسیزجه و انگلیزجه ایستالنریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه، قارت ویزتله، مکتوب باشلری، کتابله، غزنه لر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یگانه مز محترم مشتریله رمزی نمون
قلماق در.

Տպարանիս մէջ Տառերէն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
երէն լեզուներով ամէն տեսակ Ազգեր, Վաճառականական քղեր,
Կարս լիզիքներ, Նամականքներ, Դրեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ ճաշակաւ կը տպագրուին:

Միակ նպատակնիս է գոն քաղուլ բարգելի յաճախորդները:

ՅՈՒՆԱՆԻՅԵՆ ԵՎ ԿՈՍՏԱՆՅՈՒՆ

آماسیده

مطبعه هونانیان و یاردیمیان